ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռումինիայի կառավարության միջև էներգետիկայի բնագավառում համագործակցության զարգացման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռումինիայի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

նկատի ունենալով միջազգային համագործակցության աճող դերը էներգետիկայի համակարգում,

ճանաչելով երկու երկրների միջև տեխնիկական համագործակցության առանձնակի կարևորությունը,

ձգտելով ընդլայնել համատեղ գործողությունները էներգետիկայի բնագավառում,

հետևելով տնտեսական հարաբերություններում իրավունքների հավասարության և փոխշահավետության և միջազգային իրավունքի այլ սկզբունքներին,

որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կաջակցեն միմյանց էներգետիկայի բնագավառում գիտական ու տեխնիկական համագործակցությանը, իրանցից յուրաքանչյուրի ներքին օրենսդրության համաձայն, ինչպես միջկառավարական, այնպես էլ համապատասխան գերատեսչությունների մակարդակով:

Հատուկ ջանքերը կուղղվեն նման համագործակցության խրախուսմանը հետևյալ ուղղություններում.

1. հիդրոէներգետիկական և հիդրոտեխնիկական կառույցների դիագնոստիկա և վերականգնում,
2. փոքր հզորության հիդրոէլեկտրակայանների համատեղ կառուցում և շահագործում, նախագծում,
3. փոքր հիդրոէլեկտրակայանների հիմնական սարքավորումների արտադրության կազմակերպում,
4. փոքր հիդրոէլեկտրակայանների կարգավորման և ավտոմատ կառավարման սարքավորումների արտադրության կազմակերպում, այդ թվում՝ համատեղ ձեռնարկության կարգավիճակով,
5. նավթավերամշակման գործարանի կառուցման կամ քիմիական արդյունաբերության՝ «Պոլիվինիլացետատ» գործարանի վերապրոֆիլավորման նախագծերի հիմնավորման մշակում և հետագա իրացում,

6. մասնագետների փոխանակում և որակավորման բարձրացում նավթի հանույթի, վերամշակման, տեղափոխման բնագավառներում,

7. համագործակցության հետագա ծավալում էներգետիկայի բնագավառում՝ ըստ Սևծովյան տարածաշրջանային էներգետիկական կենտրոնի ծրագրի,

8. համագործակցության հետագա ծավալում միջուկային էներգետիկայի անվտանգության բնագավառում:

Հոդված 2

Նշված գիտական և տեխնիկական համագործակցությունը կիրականացվի հետևյալ միջոցներով.

1. գիտական և տեխնիկական տեղեկության ու փաստաթղթերի փոխանակում,

2. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ էներգետիկ հետազոտական ծրագրերի մշակում,

3. փոխադարձ համագործակցություն էներգաշինարարության բնագավառում:

Համագործակցության կոնկրետ ծրագրերը, որպես կանոն, կիրագործվեն պայմանագրային հիմունքներով:

Հոդված 3

Սույն Համաձայնագրին համապատասխան՝ համագործակցության յուրաքանչյուր կոնկրետ ոլորտին առնչվող հարցերով աշխատանքային ծրագրեր կկազմվեն և կիրականացվեն երկու երկրների իրավասու պետական մարմինների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա:

Պայմանավորվող կողմերի իրավասու ներկայացուցիչները պարբերաբար՝ տարին մեկ անգամ, կարող են փոխադարձաբար հանդիպել Հայաստանում և Ռումինիայում՝ սույն Համաձայնագրի դրույթների կատարման ապահովման և աշխատանքային ծրագրերի խթանման ու վերահսկման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ մշակելու և իրականացնելու նպատակով:

Հոդված 4

Սույն համագործակցության Համաձայնագրի բոլոր ծախսերը՝ կապված պատվիրակությունների միջազգային ճամփորդությունների հետ, կկատարվեն ուղարկվող երկրի կողմից: Ընդունող Կողմը կկատարի ժամանող պատվիրակության հյուրընկալության ծախսերը:

Հոդված 5

Համագործակցության սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում երկու երկրների գործող օրենսդրության համաձայն, իրավասու մարմինների կողմից վավերացման վերաբերյալ ծանուցումը ստանալու պահից և կգործի 5 տարի ժամկետով՝ սկսած ստորագրման պահից:

Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակահատվածով, եթե Կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չտեղեկացնի մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է 1996 թվականի մարտի 25-ին, երկու բնօրինակով, հայերեն, ռումիներեն և անգլերեն, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Տեքստի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1997 թվականի հունվարի 24-ից: